



«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՄ»  
ՀՀ ԳԱԱ ԻԱՊԻ տնօրեն  
Վ. Գ. Սահակյան  
«23» փետրվարի 2015 թ.

ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի  
գլխավոր գիտաշխատողի պաշտոնի կանոնակարգ

Տվյալ պաշտոնի կանոնակարգը հաստատվել է ՀՀ ԳԱԱ ԻԱՊԻ Գիտական  
խորհրդի 19.02.2015 թ. նիստում՝ համապատասխան ՀՀ Աշխատանքային Օրենսգրքի,  
ՀՀ ԳԱԱ դրույթների և ՀՀ-ում աշխատանքային հարաբերությունները կարգավորող այլ  
կանոնակարգերի:

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Գլխավոր գիտաշխատողի պաշտոնում նշանակվում է.

- Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի իսկական և թղթակից անդամ,
- գիտությունների դոկտորի գիտական ասախճան և (կամ) պրոֆեսորի գիտական կոչում ունեցող գիտնականը, ով դեկանարում է գիտական ուղղություն և (կամ) ստեղծել է գիտական դպրոց և ունի առնվազն 15 տարվա գիտական աշխատանքի ստած:

1.2. Գլխավոր գիտաշխատողի պաշտոնի նշանակումը և պաշտոնից ազատումը իրականացվում է ինստիտուտի տնօրենի հրամանով:

1.3. Գլխավոր գիտաշխատողը պետք է իմանա

- գիտության և տեխնիկայի համապատասխան բնագավառի գիտական խնդիրները, տնտեսության ոլորտի զարգացման ուղղությունները, վերադաս մարմինների ուղեցույցները,
- հետազոտվող հարցերի վերաբերյալ ազգային և միջազգային ձեռքբերումները,
- գիտական հետազոտությունների և մշակումների պլանավորման, կազմակերպման և իրականացման նորագույն մեթոդները, միջոցները և գործնական կիրառումը,
- գործող օրենսդրությունը,
- աշխատանքի, արտադրանքի և դեկանարման կազմակերպումը,
- աշխատանքի անվտանգության կանոններն ու նորմերը:

2. Աշխատանքային պարտականությունները

Գլխավոր գիտաշխատողը

- 2.1. Իրականացնում է գիտական դեկավարություն՝ անցկացնելով հիմնարար և կիրառական բնույթի կարևորագույն գիտական խնդիրների հետազոտություններ, այդ թվում՝ գիտատեխնիկական ծրագրերով, անմիջականրեն մասնակցում է դրանց կատարմանը:
- 2.2. Զնավորում է հետազոտությունների և մշակումների նոր ուղղություններ, կազմակերպում է աշխատանքների ծրագրի կազմումը, որոշում է աշխատանքների անցկացման մեթոդներն ու միջոցները:
- 2.3. Մասնակցում է գիտահետազոտական աշխատանքների պլանների կազմմանը, կոռորդինացնում է համակատարողների գործունեությունը,
- 2.4. Ամփոփում է ստացված արդյունքները, անցկացնում է ավարտված հետազոտությունների, մշակումների և ինստիտուտի հաշվետվությունների գիտահետազոտական փորձաքննություն:
- 2.5. Որոշում է գիտական հետազոտությունների և մշակումների արդյունքների օգտագործման ոլորտը և կազմակերպում է այդ արդյունքների գործնական կիրառումը:
- 2.6. Իրականացնում է գիտության համապատասխան ոլորտի գիտական կաղըերի պատրաստում և նրանց որակավորման բարձրացում:
- 2.7. Իրականացնում է սեփական գիտատեխնիկական արդյունքների տարեկան իրապարակում տեղական և միջազգային գիտական ամսագրերում:
- 2.8. Մասնակցում է ինստիտուտի բնդիանուր գիտական սեմինարին:
- 2.9. Իրականացնում է իր հետազոտությունների ոլորտի գիտատեխնիկական ծրագրերի, նախագծերի և հոդվածների գիտական փորձաքննություն և գրախոսություն:

### 3. Իրավունքները

Գլխավոր գիտաշխատողը իրավունք ունի՝

- 3.1. Ծանոթանալ ինստիտուտի դեկավարության որոշումների նախագծերին, որոնք վերաբերում են իր գործունեությանը:
- 3.2. Իր իրավասության տակ գտնվող հարցերով դեկավարությանը ներկայացնել առաջարկություններ ինստիտուտի գործունեության և աշխատանքային մեթոդների բարելավման ուղղությամբ, դիտողություններ՝ ինստիտուտի աշխատակիցների գործունեության վերաբերյալ, առաջարկություններ ինստիտուտի գործունեության մեջ առկա թերությունների վերացման վերաբերյալ:
- 3.3. Անձամբ կամ ինստիտուտի դեկավարության հրամանով ստորաբաժանումների դեկավարներից և մասնագետներից պահանջել անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր իր պարտականությունները կատարելու համար:
- 3.4. Մյուս բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների մասնագետներին ներգրավել իրեն հանձնարարված խնդիրների լուծման մեջ:

3.5. Ինստիտուտի ղեկավարությունից պահանջել աջակցություն իր աշխատանքային պարտականությունների և իրավունքների իրականացման համար:

#### 4. Պատասխանատվություն

Գլխավոր գիտական աշխատողը պատասխանատվություն է կրում՝

- 4.1. Իր աշխատանքային պարտականությունները՝ նախատեսված տվյալ պաշտոնի համար և ՀՀ աշխատանքային օրենսդրության սահմաններում, ոչ պատշաճ կատարելու կամ չկատարելու համար:
- 4.2. Իր գործունեության ընթացքում կատարված օրինախախտումների համար՝ ՀՀ վարչական, քրեական և քաղաքացիական օրենսդրության շրջանակներում:
- 4.3. Հասցված նյութական վնասի համար՝ սահմանված ՀՀ աշխատանքային և քաղաքացիական օրենսդրությամբ: